

նրանք անհուշաւ կը դանկին հայ կալուածա-
տիրոջ անունը, թէպէտ և այլ նրանց, ա-
ռանց այլ էլ, շատ լաւ յայտնի է։

Բարձրագոյն Գուռը կայսերական հրովարտա-
կներով հրամայում է, որ հողային բողոքները
նիզամէի դատարաններում վճռվեն, իսկ ինքը
մասնաւոր հրահանգներով պատուիրում է, որ
անպատճառ շէրիի առաջ վճռվեն այդ դա-
տարը. թէ և նիզամէի դատարաններն էլ
մի առանձին առաւելութիւն չունեն, որով-
հետեւ նոյն իսկ կայսերական Թիմանների զո-
րութեամբ, այդ դատարանների նախագահնե-
րն անպատճառ Իւլէմաներ (!) պէտք է լի-
նեն։

Մուշի միւլտին մի թապուի հիման
վրա յաջողացնում է գաղտնի կերպով իրան
սեփականացնել Մուշի շրջագայքում գտնված
Մարնիկ կոչված ամբողջ գիւղը. ի հարկէ
այս անգամ էլ խեղճ գիւղացոյ բողոքը թէ
տեղական իշխանութիւններն մօտ, և թէ մեծ
վիզիր Ալի փաշայի մօտ՝ բողոքովն առանց
որ և է հետեւանքի մնաց։

Մուշի բնակիչ մի թիւրք մանրամասնա-
գանադան խարդախ ճանապարհներով կա-
րողանում է իրան սեփականացնել Մուշի շրջ-
ջակայ լեռներում գտնված Պետար անունով
գիւղը, գիւղացիները բողոքում են, բողոքը
երկարանում է վերջապէս շէրիի նոյն գիւղից
վրաներ է պահանջում, բայց այդ սարսափելի
յուսկանքն անպատիւ է մնում, որովհետեւ
աւելորդ գիւղի մէջ ոչ մի վկայ չէ գտնվում, և
այդ այն լոկ պատճառով, որովհետեւ գիւղի
բոլոր շնակիչները բացառապէս բաղկացած
են հայերից։

Չը նայելով հարկերի բազմատեսակ ու
բազմապատկի լինելուն, այնու ամենայնիս ժո-
ղովուրդը դարձեալ շատ զոհ է, որ հատկե-
ների տասանորդը հատիկով է վճարում, բայց
աւելի անտանելի է խտաի վրա դրված հար-
կը, որը ժողովուրդը ստիպված է փողով
վճարել. այս թշուառութեան պատճառը նը-
րանից է, որ պետութիւնը ստանալով պատ-
րաստի փող միւլտէ գիւմնի րից, զոհում է
այս վերջիններին ժողովուրդի շահերը։ Կարելի

է երեւակայել ժողովուրդի դրութիւնը. մթերքը
զիցուք թէ առատ էլ է, արտահանութեան
անկարելիութեան պատճառով մթերքը վը-
տում է գետնին, իսկ գիւղացին դրա տասա-
նորդը, և շատ կողմնակի հարկերը փողով
պէտք է վճարէ...

Ահա մի (կենդանիներն վրա դրված տա-
սանորդը) էլ միւս հարկերից պակաս չէ ձըն-
շում քրիստոնեայ ժողովուրդին։ Ահա միջին
(հարկահանը) փոխանակ ժամանակին գալու
և հաշուել կենդանիները՝ բաւականանում է,
նախորդ տարուայ ցուցակով, և միշտ իր գըլ-
տից էլ մի քանի բաներ աւելացնելով, պա-
հանջում է հարկը. նա ոչինչ ուշադրութիւն
չէ դարձնում գիւղացու արդարացի բացատրու-
թիւններին, որ քրիւղերը բոլոր տաւարը բը-
շել տարել են, որ ցաւ է ընկել անասուն-
ների մէջ, և կէսից աւելին կոտորվել են, որ
վերջապէս նա ծախել է և այլ ևս չէ կամե-
նում տաւար պահել. այս բոլորը սուտ է.
անցեալ տարի նա այսքան ունէր, հիմա կե-
րկի մի քանի ոչխարներ կամ կովեր էլ ծըն-
ված կը լինեն, հետեւաբար և թիւն էլ աւե-
լացած կը լինի...

Այս տեղ աւելորդ չենք համարում յիշել
գրքովից և մի փոքրիկ ծանօթութիւն, որի
մէջ ասված է, թէ Երզրումի վերանորոգու-
թիւնների համար նշանակված մասնաժողովի
թիւրք անդամները, ցոյց տալու համար, որ
իր քրիւղերն են, որ երկիրը յաջողութեան ու
բարօրութեան մէջ են պահում, և հարստաց-
նում են պետական գանձարանը, իրանց ներկա-
յացրած յայտարարութեան մէջ կենդանիների
հարկերից բաղկացած մի խոշոր թւանշան են
ցոյց տալի, որը ստացված է բացառապէս
քրիւղերից։ Այդ բողոքովն ճշմարիտ է, բայց
թէ նրանք ներութիւն յանձն առնելն և
նայելն, թէ այդքան անասունները ունին
գողացված աւարներ են, կարծեմ, փոխանակ
պարծկալու, նրանք աւելի պէտք է կար-
մրելին։

Պատահում են և ուրիշ տեսակ թշուա-
ռութիւններ. օրինակ Տաւրուսի և Գորգիւնի
քրիւղերը երկար ժամանակ սպոտաւմով էին

թիւրքերից և այդ կողմերի հայերին իրանց
հպատակներ էին շննել, և նրանցից տասնում
էին զանազան կամայական հարկեր, ուրիշ
խօսքով ասած, նրանց իրանց ստրուկներ էին
շննել։ 1847 թւին Օսման փաշան կարողացաւ
զերել քրիւղերի Բէտրիսան բէյ, խան Մահ-
մուդ, և Նուրուլահ բէյ առաջնորդներին, և
աքսորել նրանց իրանց ընտանիքնե-
րով։ Սրանով թիւրքերը կարծեցին, որ բոլո-
րովն նուաճեցին քրիւղերին, բայց այս յաղ-
թութիւնը նորանոր թշուառութիւնների
աղբիւր դարձաւ տեղական հայ ժողովուրդի
համար, որովհետեւ փոքր ժամանակից յետոյ,
քիւղ բէյերն ու նրանց շէյխերը, կատա-
ղած իրանց առաջնորդներին աքսորանքի պատ-
ճառով նորից ապստամբեցան, և այս ապրա-
տամբութիւնը ձնշուեւ համար, թիւրքաց
զօրքերը նորից խաղացին Տաւրուսի և Գորգիւն-
նի վրա։ Բայց այս արշաւանքն էլ պակաս
թշուառութիւն չը պատճառեց հայ ժողո-
վուրդին։ Ինքժ ժողովուրդը ապշած, մոլորված
չը գիտէ արդեօք թափառական քիւղ ցեղերին
իրան տէր ճանաչէ, թէ խումբ—խումբ եկող
թիւրքաց նիզամներն։ Նա ճարահատված
հարկ է տալի և թիւրքաց պետութեանը, և
չը ջանքի քիւղ բէյերին. այդ դեռ բաւական
չէ, խեղճ ժողովուրդը ենթարկվում է հալա-
ծանքների, ձնշման, զանակոծութեան և ըս-
պանութեան թիւրքերի կողմից, որոնք նրանց
մեղադրում են, որ նրանք հայերնակից և
գործակից են քիւղերի ապստամբութեանը,
իսկ քիւղերն էլ նրանց տանջում, չարաբար
ու հարստահարում են, պատճառ բերելով,
որ նրանք թիւրքասէրներ, հետեւաբար և
մասնիչներ են։

Բացի բազմատեսակ և կողմնակի հարկերը,
ահա թէ ինչ տեսակ օրինաւոր հարկեր են
տրված ժողովուրդի վրա։

Ժողովուրդը գիւնուրական իշխանութեան
ձեռքով վճարում է 1) ուղղակի կայսերական
գանձարանին. 2) տեղական ժամանակաւոր իշ-
խանութեանը, դարձեալ գանձարանի անունով.
3) նա տալիս է աղաւիտի կամ քեւաշիւր-
լիկ կոչված հարկը. 4) նրանք պարտաւոր են

վճարել այն թափառական ցեղերի 3 կամ 4
տարուայ հարկը, որոնք երբեք կառավարու-
թեանը հարկ չեն վճարում. և վերջապէս
ժողովուրդի վրա պարտականութիւն է դրած
պէտք եղած ճառագայթութիւնները անել լանա-
կին և նրան ձրի կերակրել։ Ուրեմն միայն
կառավարութեան նշանակած հարկը պէտք
եղածից 5 անգամ աւելի է. էլ մէկ կողմը թո-
ղած, այնքան կողմնակի հարստահարութիւն-
ները, աւարառութիւնները, կողպատութիւն-
ները, յափշտակութիւնները և հազար ու
մի անխուսձութիւնները։

Ահա այն աղետալի պատճառները, որոնք
ստիպում են լուսահատված հայերին ցրվել
աշխարհի զանազան կողմերը, և որով նրանք
հեռացնուեւ անհետանում են մայրենի երկրից։

Սկզբից ի վեր թէ կառավարութիւնը և
թէ տեղական մանր իշխանութիւնները միշտ
աշխատել են անապարհաւոր միջոցներով
կատարելապէս ստրկացնել քրիստոնեայ տարրը։
Հետեւաբար և հայերը ամեն ժամանակ են
թափալ ևն ամեն տեղ անտանելի հայհոյանք-
քներ, ամբաստանութիւնների, տանջանքների,
կողպատութիւնների, սպանութիւնների, կա-
նանց, աղջկերանց և տղայոց բռնաբարութիւն-
ների, կամ բռնի հաւատաւորութեան արբա-
պղծութեան են, ևն. այս բոլորի վրա աւե-
լացրէք և զոգովութիւնը, որ մաշում ու սպա-
ռում է նրանց նիւթական կեանքը։

(Կը շարունակվի)

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՒՍԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 15 յունվարի։ Լուր է
տարածվել, որ եկող շաբաթ Կայսրու հուն
սպասում են Պետերբուրգում։ Մինխար Լի-
վէնի օգնական է նշանակվել մինխարների
մասնաժողովի գործերի կառավարչի օգնական
Կուլումբին։

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

նէք Բօլցի ձեռնարկը և կը տեսնէք, որ 19-դ երե-
սով չէ վերջանում առաջին դարը և որ ամեն մի
հետեւեալ դարձեալ յօդուածները, թէ հարցմունքները
և թէ վարժութիւնները որոշեալ սխալմայով է
դասուորված, Այսպէս յօրինողը առաջ է բերել
յօդուածները և օրինակները ոչ թէ աչքերը խփած,
այլ աչքի առաջ է ունենցել ուսանելի լեզուի յատկու-
թիւնները, այդ օրինակներով Բօլցը բացատրում է
քերականութեան կանոնները և այլն և այլն, այն
ինչ «Рус. Слово»-ի երկրորդ մասի դասերի մէջ
ամենին կապ չը կայ, Մէկ դասը, ինչպէս ասա-
ցի, «Մշակի» անցեալ տարւոյ Ձ 189 յօդուածում,
բողոքովն նման է միւսին։ Պ. Գ. Ս. ուզում է
հաւատացնել ընթերցողին, որ կովկասեցին սուտ
է ասում, որ կովկասեցին անձանօթ է «Рус.
Слово»-ի հետ։ Եթէ կովկասեցին ծանօթանար
«Рус. Слово»-ի հետ, նա կը տեսնէր, որ առաջին
դասից մինչև 17-դ դար ուրիշ է. իսկ 17-ից մինչև
վերջը ուրիշ։ Այդ, պ. Գ. Ս., ձեր կողմից կատա-
րեալ յանգստութիւն է. դուք, ասեմք, կարող էիք
ասել, որ պ. Տէր-Գաւթեանը ճշգրտեւ ևս մի
հետեւել է Բօլցի արտօնին և Բօլցի մէթօզին, յուսալով,
որ ամեն մէկը չէր կարող ձեռն ուղղել (протереть),
բայց ինչպէս կարողացաք դուք հերքել այն, որի
մէջ ամեն մէկը, ձեռք բերելով «Рус. Слово» դա-
սագիրքը, կարող է անձամբ համոզվել։ Միթէ
դուք ձգելով «Фразеология»-ն և պատասխանները,
կարելի է ասել, որ դասը ուրիշ է. Գաւթ մի և
նոյն է մնում, պ. Գ. Ս., միայն առանց
պոչի. Հասկանում էք թէ ոչ, պ. Գ. Ս.։

Պ. Գ. Ս. ուզում է հաստատել, որ պ. Տէր-
Գաւթեանը շատ է աշխատել իր դասագրքի վրա,
որ Ուլանկուց նա վերցրել է այսքան չարք (տող),
որ ընդ ամենը հազիւ 5 երես է կազմում. իսկ
անձը կասեմք, որ դասագրքի երկրորդ մասի տասն-
մեթ յօդուածից տասնուհին Ուլանկու սեպհա-
կանութիւն է։ Մենք ասելով, որ պ. Տէր-Գաւթ-
եանը իր դասագրքի համարեա բոլոր յօդուած-
ները վերցրել է Ուլանկուց գիտաբարապէս աչքի
առաջ ունենցել, դասագրքի ամենատեսական մասն,
այն մասը, որ պէտք է արդարացնէր, պ. Տէր-

Գաւթեանցի կարծեով դասագրքի նպատակը.
Մեր հաշուով, եթէ վերցնենք Ուլանկուց արտա-
տված յօդուածները, ընդամենը կանի ոչ թէ 5
երես, այլ մինչև 20 արտատված (եթէ հաշուենք
Ուլանկուց յօդուածներն այնքան անգամ, որքան
սոված են Рус. Слово-ի մէջ)։ Պատահում են Ուլան-
կու մի քանի յօդուածներ և երրորդ մասում
«Рус. Слово» դասագրքի երկրորդ և երրորդ մասի
մէջ ոչ մի կապ չը կայ. երրորդ մասը մի քանի
յօդուածների հաւաքածու է, որ ինչպէս ասացի
ես, առանձնապէս հետաքրքիր չեն։ Գիտեմ, դուք
պ. Գ. Ս.-ի համար շատ հետաքրքիր են. ով է ի-
մանում Պ. Գ. Ս. ի հարկէ կարող է ասել, որ
այդ յօդուածներն ամեն արեւելի յօդուածներ
են Պետրոսովից, Ծօպէնից և այլն. Պ. Գ. Ս. Լերի
և նոյնքան ծանօթ է այդ հեղինակների հետ, որ-
քան և Բօլցի արտօնին ու Բօլցի մէթօզի հետ.
Պ. Գ. Ս. այն էլ է ասում, որ Ուլանկու «Рус. Сло-
во» գրքի մէջ ոչ մի կապ չունեն գրաւոր վարժու-
թիւնները ընթերցանութեան յօդուածների հետ,
իսկ պ. Տէր-Գաւթեանցի դասագրքի մէջ նորա
նախընթաց յօդուածների հետ մեծ կապ ու-
նեն։

Ճշմարիտ ասած, այս խօսքերը միայն ծիծաղ
կարող են յարուցանել։ Մեզ մի լրագրական յօդ-
ուածի շրջանը չէ ներում երկարօրէն բացատրել
թէ «Рус. Слово» յօդուածների և գրաւոր վարժու-
թիւնների մէջ ինչ կապ կայ, իսկ այստեղ միայն
կը յիշենք ընթերցողին, որ «Рус. Слово» երրորդ
մասում, (որը 51 երես է կազմում) թէ բերանացի
և թէ գրաւոր վարժութիւնները ընդ ամենը 110
տող են, այսինքն միայն 3 երես։ Եթէ մենք են-
թադրենք, որ գրաւոր վարժութիւնները լուս են
յօրինած, ասացէք ինչդեմ, այդպիսի չնչին աշ-
խատանքի համար արժէր այդքան խոշոր մասու-
ցանել պ. Տէր-Գաւթեանցի առաջ. երրորդ մասի
մնացած 48 երեսը բոլոր առ բաւ, ինչպէս և
ինքն պ. Գ. Ս. և խոստովանվում է, պ. Տէր-
Գաւթեանցը արտատվել է ուրիշների հեղինա-
կութիւններից։ Պ. Գ. Ս. այդ բանում ուզում է
արդարացնել պ. Տէր-Գաւթեանցին նրանով, որ

Ուլանկու Рус. Слово-ում նրա աշխատութիւնն
է միայն 125 յօդուած, իսկ մնացած 146 ուրիշ
ներկայ է։ Որքան ինչ յայտնի է, պ. Գ. Ս., Ուլան-
կին իրա յօդուածների միայն շատ փոքր մասը
վերցրել է ուրիշներից, իսկ մնացածները կամ ի-
րանն է, կամ թէ նա թարգմանել է գերմաներէնից
որոնցից մի քանիսը յարմարեցրել է ռուսաց
կեանքին և ոչ թէ պ. Տէր-Գաւթեանցի նման
ուղղակի վերցրել է այս կամ այն ինչ յօդուածը և
արտատվել է։ Այս էլ շատ ու շատ զգուշ հաս-
կանալու է, չէ, պ. Գ. Ս.։

Պ. Գ. Ս. կարծում է, որ պ. Տէր-Գաւթեանցի
դասագրքի միջոցով հայ մանուկներին կարելի է
շուտով սովորեցնել հնչողութեամբ իրանց օտար
առեւերէն բարբառը և խօսեցնել այդ լեզուով,
իսկ Рус. Слово ունի նպատակ ռուս մանուկնե-
րին զարգացնել իրանց մայրենի լեզուով, սովորեց-
նել նրանց մտածել, հարստացնել և մաքրել
նրանց մայրենի լեզուն։ Այս է իբր թէ պատճա-
ռը, որ Рус. Слово պէտք է փոխարինէր Рус.
Слово դասագիրքը։ Ծառ լաւ էք խօսում, պ. Գ.
Ս., բայց հասկացէք վերջապէս, որ մի կողմից
բառարան սերտելով երբէք և ոչ երբ լեզու չէ սո-
վորել և չէ կարող սովորել, միւս կողմից, եթէ
երկխոս փոքր ի շատեւ ուղիղ է խօսում հայերէն,
վերցնելով պ. Տէր-Գաւթեանցի Рус. Слово դա-
սագիրքը և անդադար և անդադար հանգիստելով
վերս յիշած նախադասութիւնների նման-
ներին («միւսն տակին սեղանիս և այլն») ոչ թէ
առեւերէն լեզու կը սովորէ, այլ հայերէն էլ կա-
րող է մտանալ, գիտցած լեզուն էլ այլանգակի,
այն ինչ Рус. Слово-ի բազմաթիւ և հետաքրքիր
յօդուածները, չնչին բացառութեամբ, ցեղեցիկ
նիւթ կարող է տալ ռուսացիին լեզուն սովորեց-
նելու համար։ Ի հարկէ ռուսացիները իրանք էլ
ծանօթ պէտք է լինեն ռուսաց լեզուի հետ։

Կարող ենք հաւատացնել պ. Գ. Ս.-ին, որ այն
տեսակ գրաւոր վարժութիւնները, որ նա գտել է
պ. Տէր-Գաւթեանցի դասագրքի երրորդ մասում,
հազար ու մէկ կը գտնէ Ուլանկու «Рус. Слово»-ի
մէջ, թէպէտ ինքն այդ հերքում է։

Գալով վերջապէս. պ. Տէր-Գաւթեանցի դասա-
գրքի մինչև, պ. Գ. Ս. նկատում է, որ ամօթ
է մեղանում դեռ վարժապետի, հեղինակի աշխա-
տութիւնների վրա խօսքերը և այլն... Եթէ, պ.
Գ. Ս., ամօթ է մեղանում դեռ վարժապետի (ես
վարժապետների վարձատրութեան մասին իմ
նախկին յօդուածում մի խօսք անգամ չեմ ասել),
հեղինակի վրա խօսելը, որքան մեծ ամօթ պէտք
է լինի նրանց համար, որոնք այնպիսի մի ազգի
մէջ, որի ուսումնարանները միայն այս վերջի
ժամանակներում են սկսում փոքր ի շատեւ չունչ
ստանալ, այնպիսի մի ազգի մէջ, ասում ենք,
տարածվելու դասագրքին նշանակել 73% աւելի
քան թէ իրանց է նուտել... Գաւթ, պ. Գ. Ս., իմ
ուշադրութիւնն էք դարձնում մեր կապալառու-
ների վրա, որոնք ոչնչի համար 100 հազարներ են
գրպանը դնում, դրանով կարծես ուզում էք ար-
դարացնել պ. Տէր-Գաւթեանցի վարժանքը։ Գուք,
պ. Գ. Ս., ի հարկէ նոյնպէս կարդարացնել
պ. Տէր-Գաւթեանցին, եթէ, աչքի առաջ ունենա-
լով, որ կարող են գտնվել այնպիսի անձինք, որոնք
գողերի նման ձրի այցելում են ներկայացուցիչները
և նստում են ռազմավարների առաջի կամ երկ-
րորդ կարգում, եթէ, ասում ենք մենք, պ. Տէր-
Գաւթեանցը նոյնպէս այցելէր ներկայացուցիչները
և նստէր ամբոնների վերջի կարգում։

Եթէ կապալառուները կարող են ոչնչի համար
100 հազարներ գրպանը դնել, ուրեմն և պ. Տէր-
Գաւթեանցը կարող է իր դասագրքին 45 կ. նշա-
նակել։ Եթէ մէկը բազմաթիւների առաջին կամ
երկրորդ կարգում կարող է ձրի նստել, ինչու պ.
Տէր-Գաւթեանցը ամբոնների վերջին կարգում չէ
կարող նոյնպէս ձրի նստել...

Այսպէս մենք բաւական ենք համարում հար-
ցը պարզելու համար։

Կովկասեցի